

ՀԻՆՉԱԲԹԻ, 9 ՆՈՅՄԲԵՐԻ 2017Թ.
№ 36 (454)

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

**Փոխվել են դերերն ու
սերերը,
Բայց նույնն է երախտ
վիշառի...**
Նամո Սահյան



Ձախողվել է մարզպետին հնազանդ մեծամասնություն ձեւավորելու խարդավանքը

Կապան համայնքի ավագանու ձեւավորումն ի սկզբանե տարբեր մոտեցումների տեղիք տվեց իշխող կուսակցության տարածքային կազմակերպությունում:

Այն բանից հետո, երբ Վահե Հակոբյանը չկարողացավ քաղաքական ասպարեզից հեռացնել Աշոտ Հայրապետյանին եւ նրա փոխարեն կամակատար մեկին առաջադրել համայնքի ղեկավարի թեկնածու, խնդիր դրեց գոնե ավագանու կազմում ունենալ մարզպետին հնազանդ մեծամասնություն՝ համայնքի իշխանության վրա անձնական ազդեցություն ապահովելու համար: Եվ ավագանու անդամի թեկնածու առաջադրվելու հրահանգ տվեց տասը հոգու, որից երկուսին հետագայում ինքնաբացարկի կոչ արեց՝ եղած ռեսուրսը նույնների 5-ին ավելի արդյունավետ օգտագործելու նպատակով:

Առաջադրվածների մեջ, անշուշտ, կային եւ արժանավորներ: Կարելի է նույնիսկ ասել՝ եթե այդ թեկնածուները չլինեին մարզպետի հովանավորյալները կամ եթե այդ մասին չիմանար հանրությունը, գուցե եւ արժանանային ընտրողների հավանությանը:

Ի վերջո ուրիշ միայն մեկ հոգի՝ Հայկ Հարությունյանը, ստացավ ընտրողների վստահության քվեն (Սյունիքի մարզպետարանի կրթության բաժնի պետ, 749 ձայն):

Անցողիկ շենք չհաղթահարեցին Բոր հորջորջումով Վլադիկ Առաքելյանը (աշխատանքի վայրը նշված չէ, 515 ձայն), Սեյրան Ավետիսյանը (Սյունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման եւ հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ, 452 ձայն), Գրիշա Խաչատրյանը (Սյունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման եւ համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ, 321 ձայն), Մարինե Դավթյանը (Կապանի թիվ 6 հիմնական դպրոցի տնօրեն, 432 ձայն), Արթուր Սնացականյանը (Կապանի թիվ 3 դպրոցի տնօրեն, 504 ձայն), Արմեն Հովհաննիսյանը (համատիրության նախագահ Կապանում, 357 ձայն), Էդգար Մարտիրոսյանը («Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ առաջատար ինժեներ, 442 ձայն):

Ընտրությունից մի քանի օր առաջ Վահեն անձամբ էր հավաքել իր ենթակա կառույցների ղեկավարներին եւ աշխատանքի բաժանում կատարել, թե որ կազմակերպությունը թեկնածուներից որ մեկին պիտի սատարի:

Խորհրդակցության մասնակիցները հենց սկզբից դժկամությամբ են ընդունել մարզպետի հանձնարարականը եւ, ինչպես ցույց տվեցին քվեարկության արդյունքները, լրջորեն հետամուտ չեն եղել հանձնարարականի կատարմանը:

Մարզպետի ուր թեկնածուից յոթին մերժելը մեկ անգամ եւս ցույց տվեց, որ Կապանը, այնուամենայնիվ, իր սեփական դեմքն ու արժանապատվությունը պահել գիտի, մանավանդ, երբ բախվում է մարզպետի մանրախնդրությանը եւ քիմախնդրությանը:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Գորիսի ֆրանս-հայկական սրբանոթային կենտրոնը շուտով կհամալրվի նոր ծառայություններով

Սրտանոթային հիվանդությունների հնարավոր կանխարգելման, մարզում դրանց վերաբերյալ որոշակի վիճակագրական տվյալների, սոցիալաբանական նախատեսված արտոնությունների եւ ոլորտում առկա մի շարք հարցերի մասին է գրույցը Գորիսի ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոնի բուժական մասի ղեկավար, միջամտական բժիշկ-սրտաբան, Հայաստանի ստենտավորող բժիշկների ասոցիացիայի անդամ Կարեն Համբարձումյանի հետ:

էջ 3

Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Մաթիաս Քիսլերին

Մեծարգո պարոն դեսպան
2017թ. սեպտեմբերի 25-ին հրապարակավ հայտարարել են, որ «Քրոնիմետ մայնից» ընկերության կազմում գտնվող «Քաջարանի ՊՄԿ» ՓԲ ընկերության նախկին վարչական տնօրեն, գլխավոր տնօրենի նախկին առաջին տեղակալ, Սյունիքի գործող մարզպետ Վահե Հակոբյանը կոմբինատի ֆինանսական միջոցները ծառայեցնում է մարզի մի շարք խոշորագույն համայնքներում 2017թ. նոյեմբերի 5-ին անցկացվելիք ընտրություններում իր նախաձեռնությամբ ու հովանավորությամբ

առաջադրված թեկնածուների օգտին, որոնց միակ «արժանիքը» իր անձին նվիրվածությունն է:

Իր հովանավորյալ թեկնածուների կողմից բարեգործության անվան տակ իրականացվող աշխատանքները ֆինանսավորվում են հիմնականում այդ ընկերության կողմից:

Դրանք լայնորեն լուսաբանվում են զանգվածային լրատվամիջոցներով, ինչի մասին հպարտորեն հայտարարում է նաեւ ինքը:

էջ 3



Նոյեմբերի 5-ին մարզի չորս համայնքում փերի ունեցան ՏԻՄ ընտրություններ

2017թ. նոյեմբերի 5-ի ՏԻՄ ընտրություններում (ըստ նախնական տեղեկությունների) քվեարկությանը մասնակցել են՝
Գորիս համայնքում՝ 13 162 հոգի (59,43 տոկոս)՝ քվեարկելու իրավունք ունեցող 22 148 քաղաքացուց, Սիսիան համայնքում՝ 12 639 հոգի (54,45 տոկոս)՝ քվեարկելու իրավունք ունեցող 23 213 քաղաքացուց, Կապան համայնքում՝ 18 721 հոգի (53,45 տոկոս)՝ քվեարկելու իրավունք ունեցող 35 024 քաղաքացուց, Քաջարան համայնքում՝ 4381 հոգի (70, 15 տոկոս)՝ քվեարկելու իրավունք ունեցող 6245 քաղաքացուց:

Ընտրվել են Այունիքի խոշորացված համայնքների ղեկավարներ

Նոյեմբերի 5-ի ընտրությունների արդյունքում Կապան համայնքի ղեկավար է ընտրվել Աշոտ Հայրապետյանը (քվեարկությանը մասնակցած 18 713 ընտրողից նրա օգտին քվեարկել է 12538 հոգի կամ 67 տոկոսը):

Գորիս համայնքի ղեկավար է ընտրվել Առուշ Առուշանյանը (քվեարկությանը մասնակցած 13163 ընտրողից նրա օգտին քվեարկել է 12945 հոգի կամ 98,6 տոկոսը):

Սիսիան համայնքի ղեկավար է ընտրվել Արթուր Սարգսյանը (քվեարկությանը մասնակցած 12637 ընտրողից նրա օգտին քվեարկել է 10457 հոգի կամ 82,8 տոկոսը):

Քաջարան համայնքի ղեկավար է ընտրվել Մանվել Փարամազյանը (քվեարկությանը մասնակցած 4381 ընտրողից նրա օգտին քվեարկել է 4232 հոգի կամ 96,6 տոկոսը):

Շնորհավորում ենք համայնքների նորընտիր ղեկավարներին՝ նրանց մաղթելով նախընտրական խոստումների եւ համայնքների բնակիչների սպասելիքների իրականացում, մարզում քաղաքացիական համերաշխության վերականգնում եւ ամրապնդում, ինչպես եւ համայնքների առջեւ ծառայած հիմնախնդիրների աստիճանական լուծում:

«Այունյաց երկիր»



Աշոտ Հայրապետյան



Առուշ Առուշանյան



Մանվել Փարամազյան



Արթուր Սարգսյան

Համայնքի ավագանու անդամի ընտրությունների արդյունքները



- Կապան** – 355
 Կապան համայնքի ավագանու ընտրությանը 35024 ընտրողից մասնակցել է 18712 հոգի (ընտրողներից ստացված կտրոնների թիվը՝ 18707, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 255):
 Առավել շատ ձայներ են ստացել ավագանու անդամի ներքոհիշյալ թեկնածուները՝
 1. Անտոնյան Արեն Գարիկի – 904
 2. Ասրյան Վաչե Ռաֆայելի – 602
 3. Գետրոզյան Վարդան Կարենի – 573
 4. Գրիգորյան Վիլեն Սեյրանի – 544
 5. Դանիելյան Վահե Արմենի – 1115
 6. Դավթյան Նարեկ Դավիթի – 621
 7. Դավթյան Շանթ Սամվելի – 536
 8. Կարապետյան Մանաս Արարատի – 1006
 9. Կոստանյան Իվան Գրիշայի – 550
 10. Հարությունյան Կամո Վանիկի – 780
 11. Հարությունյան Հայկ Սաշայի – 749
 12. Մարտիրոսյան Կարեն Վլադիկի – 654
 13. Մեսրոպյան Նապոլեոն Մելսիկի – 523
 14. Սկրտչյան Արա Միքայելի – 996
 15. Մովսիսյան Ժան Վանյայի – 675:
- Սիսիան**
 Սիսիան համայնքի ավագանու ընտրությանը 23213 ընտրողից մասնակցել է 12637 հոգի (ընտրողներից ստացված կտրոնների թիվը՝ 12633, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 121):
 Առավել շատ ձայներ են ստացել ավագանու անդամի ներքոհիշյալ թեկնածուները՝
 1. Այվազյան Վարդգես Դավթի – 478
 2. Առաքելյան Հայկ Ատոմի – 854
 3. Առաքելյան Հովսեփ Հրաչի – 582
 4. Գետրոզյան Գետրոգ Վիլիկի – 425
 5. Խոսրովյան Գագիկ Լամժետի – 355
 6. Համբարձումյան Դավիթ Վալերիկի – 406
 7. Հայրապետյան Հարություն Սլավիկի – 431
 8. Հարությունյան Արման Գրիգորի – 579
 9. Հարությունյան Մարտին Մայիսի – 520
 10. Հովհաննիսյան Էդգար Ռուբիկի – 555
 11. Դարիբյան Բագրատ Ռաֆիկի – 470
 12. Միրզախանյան Արմենակ Վարուժանի – 773
 13. Ներսիսյան Նաիրա Վազգենի – 530
 14. Ստեփանյան Բագրատունի Արտակի – 443
 15. Վարդանյան Սուրեն Ռազմիկի – 354:
- Քաջարան**
 Քաջարան համայնքի ավագանու ընտրությանը 6245 ընտրողից քվեարկությանը մասնակցել է 4381 հոգի (ընտրողներից ստացված կտրոնների ընդհանուր թիվը՝ 4381, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 40):
 Ստորև՝ ավագանու անդամի թեկնածուների ստացած քվեների նախնական արդյունքները.
 1. Աթայան Մերուժան Լենդրոշի – 368
 2. Անդրեասյան Արմեն Ռոբերտի – 1030
 3. Առաքելյան Սասուն Արամայիսի – 418
 4. Գետրոզյան Մարինա Անուշավանի – 76
 5. Իսրայելյան Գարիկ Հովհաննի – 339
 6. Հակոբյան Արմեն Միսակի – 153
 7. Համբարձումյան Կարեն Արամայիսի – 518
 8. Մակիյան Կարինե Ալեքսանդրի – 84
 9. Պետրոսյան Հովհաննես Ստեփանի – 639
 10. Սաղաթեյան Էրիկ Արմենի – 361
 11. Ստեփանյան Գերենիկ Սեյրանի – 315:

Գործիսի ֆրանս-հայկական սրբանորթային կենտրոնը շուտով կհամալրվի նոր ծառայություններով

էջ 1 - Բժիշկ Յան Բարոնյան, մեր թերթին տված հարցազրույցներից մեկում նշել էիք, որ սյունեցիները հիմնականում բժիշկներին դիմում են ծայրահեղ ծանր վիճակում: Այս ժամանակահատվածում բնակչության շրջանում նկատվում է դիմելիության թվի նվազում կամ ավելացում:

- Հատկապես վերջին տարվա ընթացքում հիվանդների թվի աճ է գրանցվում, բայց դա ոչ թե այն պատճառով, որ այդ հիվանդները չկային եւ այս տարի ավելացան, այլ մեր լուսավորչական աշխատանքների շնորհիվ կարողացել ենք ազգաբնակչությանը, բժիշկներին հասցնել այն պարզ գաղափարը, որ ամբողջ աշխարհում ընդունված բուժման այս եղանակն է, որ սուր արտային պատահարների դեպքում ապահովում է նվազագույն ռիսկայնություն եւ առավելագույն երկարակյանություն: Այսինքն այս ժամանակահատվածում զարգացրել ենք ակտիվորեն հնարավորությունները, ժողովրդին համոզել, որ սա բուժման ճիշտ եւ լավագույն տարբերակն է, ինչի շնորհիվ մարդիկ կրճատվանալիս շրջանում զանգատներ ունենալու դեպքում հաճախ են դիմում մասնագիտացված բուժօգնություն, որ մեր տարածաշրջանում Գործիսի ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոնն է: Նույնիսկ մարզային հեռուստատեսության հաղորդաշարի միջոցով փորձեցինք բացատրել, թե ինչ են արտային հիվանդությունները, կորոնարոգրաֆիան, ստենտավորումը, զոնդավորումը եւ այլն: Իմ կարծիքով սա նույնպես նպաստեց հիվանդների դիմելիության թվի աճին: Եթե թվային տվյալներով ասեն, նախկինում տարբեր հետազոտությունների, համապատասխան բուժօգնություն ստանալու համար կենտրոն էր դիմում օրական 7-8 հիվանդ, ապա այս տարի այդ թիվն օրական կազմում է 12-14 հոգի: Սա ուրախալի է միայն այն առումով, որ մարդը ժամանակին է սկսում հետևել իր առողջությանը, որպեսզի բանը չհասնի վիրահատության, կորոնարոգրաֆիայի, ստենտավորման կամ ռեանիմացիոն բուժման:

Հաջորդ քայլը, որ շատ են կարևորում, հոկտեմբերի 13-14-ին անցկացված սրտաբանների եվրակոնվուկսյան 6-րդ համաժողովն է, որ իրականացվեց «Ակցիա Առողջություն Հայաստան-Ֆրանսիա» կազմակերպության եւ ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ, ՀՀ առողջապահության նախարարության աջակցությամբ: Համաժողովին մասնակցեց 38 սփյուռքահայ եւ օտարազգի անվանի սրտաբան

Ֆրանսիայից, Մեծ Բրիտանիայից, Իտալիայից, Լիբանանից, Ռուսաստանից, Մոնակոյից, Իրանից, Ղազախստանից, շուրջ 250 սրտաբան Հայաստանից եւ Արցախից: Համաժողովի ընթացքում ներկայացրինք Գործիսի ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոնի գործունեությունը, հնարավորությունները, սրտաբանության ոլորտում առկա նորությունները, առանձին դեպքերում կատարված գործողությունները եւ այլն:

Մի խոսքով այս ժամանակահատվածում տարբեր միջոցներով եւ ձեւերով հնարավորինս լուսաբանել ենք մեր գործունեությունը, ինչի հետեւանքով ավելացել է պրոֆիլակտիկ ստուգում անցնողների թիվը՝ հիվանդության զարգացումը վաղ շրջանում կանխարգելելու, դժբախտ պատահարներից խուսափելու համար:

Այս տարի նախատեսում ենք բացել կանխարգելիչ սրտաբանության ծրույց, որի նպատակն է ուսուցանել առողջ ապրելակերպի կանոնները: Բնական է, 60-65 տարեկան մարդու մոտ արդեն ոչինչ չես կարող փոխել, բայց երիտասարդ սերնդի շրջանում բացատրական, ուսուցողական նյութերի միջոցով կարող ենք նրանց հնարավորինս հեռու պահել վնասակար սովորույթներից, սովորեցնել ճիշտ սննդակարգով սնվել, մի խոսքով առողջ ապրելակերպ վարել: Համոզված եմ այս հարցում նույնպես մեր հետեւողականությունը կտա իր ցանկալի արդյունքը:

- Միջին տվյալներով մարզում սրտանոթային խնդիրներով հիվանդների մոտ 70 տոկոսին դրվում է երկու եւ ավելի ստենտ: Կա՞ փոփոխություն այս տվյալների մեջ:

- Ցավոք սրտի՝ ոչ: Հիվանդների մեծ մասը ծայրահեղ ծանր վիճակում է դիմում մեր կենտրոն, երբ, միգրացիոն կոպիտ հնչի, մեզմիջ հետո արդեն գերեզմանն է: Մեծ դժվարությամբ կարողանում ենք բուժօգնություն ցուցաբերել, հիվանդին կյանք վերադարձնել, որովհետեւ գալիս են բազմաճյուղային ախտահարմամբ, երբ չգիտես, թե բուժումը որտեղից սկսել: Իսկ պատճառը, ինչպես արդեն նշեցի, դանակը ոսկորին հասած վիճակում կենտրոն դիմելն է: Կարծում եմ բնակչության մտածելակերպի մեջ էական փոփոխության համար տեսական ժամանակ է հարկավոր:

- Հայտնի է, որ ստենտավորված հիվանդների՝ կենտրոնում մահացության ցուցանիշի թուլալտրելի սահմանը 7-8 տոկոս է: Ձեր կենտրոնում ինչպիսի՞ն է այդ ցուցանիշը:

Այնպես է, որ եվրոմիջինային առաջատար ու աշխարհում առաջադիմության, ժողովրդավարության օրինակ ծառայող Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գրանցված ընկերության սեփականություն հանդիսացող Քաջարանի

- Մեկ տարվա կտրվածքով մեր կենտրոնում մոտավորապես 300 հիվանդի կատարվում է միջամտական գործողություն (խոսքը կորոնարոգրաֆիային չի վերաբերում), եւ մահացության դեպքերի թիվը տատանվում է 4-5-ի սահմաններում, եթե տոկոսային հարաբերությամբ ասենք՝ մոտ 2 տոկոս:

- Որքանով են իրականությանը համապատասխանում հանրության շրջանում տարածված այն խոսակցությունները, թե իբր ստենտավորումն արագացնում է հիվանդի մահը:

- Այդ հարցին բազմիցս անդրադարձել եմ, բայց եւս մեկ անգամ կպատասխանեմ: Սկսեմ այնտեղից, որ այսօր աշխարհում բժշկությունն այն փուլում է, որ կոչվում է ուղեցուցային: Այլեւս անցյալում է մնացել «Իմ կարծիքով կարելի է այսպիսի բուժում կատարել» կամ «Այսինչ պրոֆեսորն այսպես է կատարել» եւ նմանատիպ այլ սկզբունքներով առաջնորդվել: Այժմ կան ուղեցույցներ, որոնցում հստակ նշված է, թե հիվանդի որ գանգատի դեպքում ինչ հետազոտություն կամ գործողություն կատարել: Չենք բացառում, սակայն, որ յուրաքանչյուր գործողություն ունի իր ռիսկերն ու բարդությունները, որոնք կախված են ոչ միայն բժշկից, այլեւ հիվանդի վիճակից, օրգանիզմից: Եթե հիվանդը կենտրոն է հասնում արդեն սուր ինֆարկտով կամ կարդիոգեն շոկով (երբ ինֆարկտված է սրտամկանի մեծ մասը), ապա դա նշանակում է, որ այդ դեպքում արդեն իսկ մահացության հավանականությունը բարձր է: Մարդկանց մի խումբ կա, որոնց երբ բացատրում ես, որ քո հիվանդը, եթե նույնիսկ մի քանի ժամ կամ օր ապրում է, դա արդեն Աստուծո պարգև է, որովհետեւ նա մինչեւ մեզ հասնելը կարող էր մահանալ ռեանիմացիոն սենյակում կամ վիրահատական սեղանին, եւ ոչ թե ստենտավորումն է վնասել հիվանդին, այլ՝ ծայրահեղ ծանր վիճակը, չի հասկանում: Ընդհանրապես ստենտավորում կատարելով ոչ թե հիվանդն առողջանում է, այլ սա հնարավորություն է տալիս նրա կյանքը երկարացնել: Կատարվի, թե ոչ, ցույց կտա ժամանակը:

Մարդկանց մի խումբն էլ կարծում է, թե սրտի անոթների կորոնարոգրաֆիան, ստենտավորումը մատից փուլը հանել է, որ կարող են գալ արագ-արագ կատարել ու գնալ առանց գիտակցելու, որ սրտի հետ գործ ունեն:

Ստենտավորում կատարելուց առաջ մանրամասն բացատրական աշխատանք ենք կատարում, էջ 5

Ծերուկ Պիլարսկին ի վերջո հասկացել է, որ խաբված է, եւ այն մասին, թե ինչու էր Պեպրոս Մեծ կայսրն առանց դադ անելու գլխապում հույժ կարճահասակներին

Քաջարանի կոմբինատի մեր աղբյուրները տեղեկացնում են, որ վերջերս, երկարատեւ լռությունից հետո, կոմբինատ է այցելել «Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ բաժնետոմսերի մոտ 60 տոկոսի սեփականատեր գերմանական «Քրոնիմետ» ընկերության ղեկավար Գյունտեր Պիլարսկին՝ որդու ուղեկցությամբ: Կոմբինատի ղեկավարությունն առավելագույն ջանքեր է գործադրել այցի կարելու հանգամանքները հանրությունից թաքցնելու համար, սակայն որոշ մանրամասներ, այնուամենայնիվ, ջրի երես են դուրս եկել ուշացումով:

տակ, արդյո՞ք նպատակահարմար է եղել այդչափ վարկեր վերցնելը: Պիլարսկու որդուն էլ զարմացրել է կոմբինատի վարչական շենքում հանգրվանած ծրիակերների այդքան մեծ նախիրը, բազմաթիվ ավելորդ ու կասկածելի ծառայությունների, հաստիքների առկայությունը, ինչպես եւ ծառայողական թանկարժեք մեքենաների անսահմանությունը: Ըստ նույն աղբյուրի՝ այդ այցից հետո Պիլարսկին որոշել է վաճառքի հանել իր բաժնեմասը: Այդ այցից հետո գլխավոր բաժնետերը որոշել է միջազգային աուդի-



Ծերուկ Պիլարսկին, պարզվում է, առաջացած տարիքի պատճառով այլեւս ի վիճակի չէ նախկին ակտիվությամբ ու հետեւողականությամբ զբաղվել իր ձեռնարկություններից մեկի՝ «Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ ընկերության գործերով: Բայց նրան, այդուհանդերձ, մի քանի հարց է հետաքրքրել, որոնք վերջին հաշվով անպատասխան են մնացել: Օրինակ, ինչպե՞ս է ստացվել, որ հանքաքարի համույթի ծավալի մոտ երեք անգամ ավելացան դեպքում (տարեկան յոթ միլիոնից հասել է մոտ 20 մլն տոննայի) կոմբինատը գրեթե զրկվել է շահույթից եւ նոր կառավարիչների օրերում (երեք տարի շարունակ) բաժնետերերը համարյա թե շահույթ չեն ստացել՝ չհիմնավորված, չպատճառաբանված, կասկածելի ծախսերի հետեւանքով: Ի՞նչ գործողությունների հետեւանքով է կոմբինատը հայտնվել մոտ 180 մլն դոլար վարկային բեռան

տորական կազմակերպության միջոցով ստուգել կոմբինատի ֆինանսական գործունեությունը 2014-ից մինչեւ հիմա ընկած ժամանակաշրջանի կտրվածքով: Պիլարսկու այցի հետ կապված որոշ հանգամանքների բացահայտումն ինչ-որ չափով պատասխան է տալիս այն հարցին, թե ինչո՞վ է իրականում զբաղված Քաջարանի կոմբինատի ղեկավարի եւ Սյունիքի մարզպետի աթոռը փաստորեն համատեղող Վահե Հակոբյանը: Քաջարանի կոմբինատում Վահե պատահականությամբ ջանքով ստեղծված վիճակը պատասխանում է նաեւ երեք հարյուր տարի շարունակ պատմաբաններին մտահոգող մի հարցի եւս՝ ինչո՞ւ էր Պեպրոս Մեծ իմաստուն կայսրն առանց դատ անելու գլխատում հույժ կարճահասակներին: ՍԱՄԿԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Մաթիաս Քիսլերին

էջ 1 Հանրահայտ է, որ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը երթելով ուղղաթիռով, որի ծախսը նույնպես, ինչպես ինքն է խոստովանում, կատարվում է «Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ ընկերության կողմից: Վահե Հակոբյանն իր գործողություններով եւ հայտարարություններով հաստատել է նաեւ, որ ինքն ինքն է այդ փակ բաժնետիրական ընկերության փաստացի կառավարիչը: Ու երբեմնի հեղինակավոր այդ ձեռնարկության միջոցներն օգ-

տագործում է իր ընդդիմախոսներին պատժելու, խոսքի ազատությունը ճնշելու, մարզի լրատվամիջոցների գործունեությունը կազմալուծելու, միջնադարյան ինկվիզիցիայի ժամանակներին հատուկ գործելակերպ հաստատելու համար: Այնպես է, որ եվրոմիջինային առաջատար ու աշխարհում առաջադիմության, ժողովրդավարության օրինակ ծառայող Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գրանցված ընկերության սեփականություն հանդիսացող Քաջարանի

կոմբինատի ֆինանսական ծանրակշիռ միջոցները ՀՀ ներքաղաքական (եւ հատկապես Սյունիքի մարզի ներքաղաքական) կյանքին ու մարզպետի քիմբին ծառայեցնող՝ հիշատակածս փաստերն իսկական կոռուպցիայի ճշացող օրինակներ են: Արատավոր այդ երեւույթն ինչպես Գերմանիայի Դաշնային Հանրապետության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համարվում է առանձնապես ծանր հանցագործություն՝ ուղղված հայր պետականության դեմ, այս դեպքում

նաեւ հայ-գերմանական բազմադարյա բարեկամության վարկաբեկմանը, ինչի վերացմանն ու դրա հեղինակ Վահե Հակոբյանին անհապաղ պատասխանատվության ենթարկելու համար դիմում ենք Ձեզ՝ ակնկալելով կարելու դերակատարություն: Միաժամանակ հուսով եմ, որ «Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ ընկերությունը բացառապես ազնիվ նպատակով եւ լրջորեն կնպաստի որչ Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական ու հոգեւոր-մշակութային առաջընթացին (ինչպես եղել է

Քաջարանի կոմբինատի մեր աղբյուրները տեղեկացնում են, որ վերջերս, երկարատեւ լռությունից հետո, կոմբինատ է այցելել «Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ բաժնետոմսերի մոտ 60 տոկոսի սեփականատեր գերմանական «Քրոնիմետ» ընկերության ղեկավար Գյունտեր Պիլարսկին՝ որդու ուղեկցությամբ: Կոմբինատի ղեկավարությունն առավելագույն ջանքեր է գործադրել այցի կարելու հանգամանքները հանրությունից թաքցնելու համար, սակայն որոշ մանրամասներ, այնուամենայնիվ, ջրի երես են դուրս եկել ուշացումով:

Հարգանքով՝ Սամվել Հարությունյան 30 հոկտեմբերի 2017թ.

Վերին Խոյրանան. ամեն մի կաճան՝ մի հուշապատում

Մեծ Հայքի Այունիք աշխարհի Բաղք-Աճա-
նան գավառի Խոտանան գյուղը հիշատակ-
ված էր դեռևս նախաքրիստոնեական շրջա-
նի Վանի թագավորության ժամանակներում
և իր անունը ստացել էր հեթանոս աստծու՝
Խուտուհիի անունից: Երբ ասում են՝ հայոց
աշխարհ, հնարավոր է չհիշատակել նրա հե-
րոսական ժողովրդի դարավոր պայքարը բա-
զում թշնամիների դեմ: Հայը գոյատևել է՝ մի
ծեռքին սուր՝ պաշտպանելու հողը ու հայրե-
նին, մյուս ծեռքին՝ գրիչ ծաղկելու մատյան-
ներ, որոնք դարձան մեր պատմության հու-
շագրերը:

Հայոց բազմաբնույթ երկրի մի մասնիկն
է Խոտանանը՝ իր վայրիվերո պայքարով, խի-
զախ գավառների դիմանկարի կերտվածքով,
և գուր չէ, որ շրջանում գյուղը հիշատակվում
է որպես զինվորականների օրրան:

Եվ աստվածանուն այդ գյուղը դարերի
մեջ եղել է անկտրոսում, թեկուզ ժամանակ առ
ժամանակ տեղահանվել, բայց պանդխտու-
թյունից վերադարձել ու մոխիրներից շեն են
շենացրել, հորովել երգել ու խմորի տաշտում
մաղից անձրեւող ձյունե հեթիաթ հյուսել,
հանգած թոնրի շուրթերին ջերմություն տվել:
Խոտանանցիները եղել է համառ, իր գործի, ուժի
տերը և թշնամական ամեն մի ընդվզումի դեմ
պայքարել գծի մասն: Դավիթբեկյան խոշոր
ճակատամարտերի վայրը (Լեռ, «Հայոց պատ-
մություն»), Բալի գորավարի մարտադաշտը
(գյուղամերձ «Հրոտ» հանդամաս), գյուղից
հյուսիս-արևմուտք՝ մոտ 2-3 կմ հեռավորու-
թյամբ գտնվող պատմական Վանահայրերի
(Դավաթյունի) կանգուն հաստաբետ պատերը
վկայություն են հերոսապատման:

Ամենայն հայոց կարողիկոս Մովսես Խո-
տանանցու (Տաթևացու) գյուղ. ժամանակին
սուրբ Աստվածածին թաղակապ եկեղեցին
եղել է գրչության կենտրոն, և պատահել է,
որ սուրն ու գրիչը դաշնակցել ու պատուհաս
են դարձել թշնամու գլխին: Ցավոք, որքա՛ն
անուններ են թաղվել անհայտության մեջ, որ-
քան հերոսներ՝ մոռացվել, բայց հերոսացման
վկան եղել է գոյատևած գյուղը, որի ամեն մի
կաճան մի հուշապատում է, և սերունդները
չպետք է թույլ տան, որ կաճանները թփակա-
վեն...

Ամեն մի դարաշրջան իր ձեռագիրն է թողել.
20-րդ դար, որի էջերում կրվեց Առաջին հա-
մաշխարհային պատերազմ, Հայրենական մեծ
պատերազմ, Արցախյան գոյամարտ:

Վշխարհը դարասկզբին եռում էր մեծ տե-
րությունների մարդակուլ կաթսայում՝ խժռե-
լով փոքր երկրներին, մտադրաբար դարձնելով
մարդկային կյանքը:

Խոտանանցիներն անմասն չմնաց համաշ-
խարհային կռված արհավիրքից:

1904թ. ռուս-ճապոնական պատերազմում
իր մասնակցությունն ունեցավ ցարական բա-
նակի սպա Պողոս Տեր-Դավթյանը, ով Մուկրե-
նի հայտնի ճակատամարտում ցուցաբերած
մարտավարական հմտության, խիզախության
համար ցարական կառավարության կողմից
արժանացավ բարձր պարգևի՝ Գեորգիեյան
խաչի և անվանական գեներալի:

1905թ. գորացրվելով ցարական բանակից՝
աշխատանքի է անցնում Բաքվի նավթար-
դյունաբերությունում՝ կառավարիչ. ամենուր
զգացվում էր քեռու՝ հայտնի բարերար, նավ-
թարդյունաբերող Գասպար Տեր-Մարգարյանի
հոգածությունը:

1914թ. կրկին սասանվում է աշխարհի թվա-
ցյալ խաղաղությունը՝ Առաջին համաշխար-
հային պատերազմ: Պողոս Տեր-Դավթյանը
զգաց, որ իր իսկական տեղը մարտադաշտն
է, և նա պատերազմը դիմավորեց Կովկասյան
ռազմաճակատում: Խոշոր տերությունների
պատերազմական իրավիճակից իր «ծաղկա-
բաղն» էր ուզում անել թուրքական բանակը,
որի ախորժակն էր խժռել Կովկասը և տիրել
հայոց մնացած երկրամասին:

Դիվանի մոտ տեղի է ունենում վճռական
ճակատամարտ: 1915թ. գնդապետ Պողոս
Տեր-Դավթյանի հրամանատարությամբ ռու-
սական ջոկատը ջախջախում է խալիլ բեյի
թուրքական կորպուսը: Այստեղ է, որ տեղի է
ունենում հայոց երկու արծիվների՝ Անդրանիկ
Զորավարի և Պողոսի անմիջական ծանոթու-

թյունն ու համագործակցությունը:

1918թ. խաթարվեց նաև հայաշատ Բաքվի
անդրորդ. տաճկական 70 հազարանոց զորա-
մասերը գրավեցին Բաքուն: Հայտարարվեց
արտակարգ դրություն: Տեղական ուժերի կող-
մից կազմվեց պաշտպանության պետական



Ավարա Անտոնյան

կոմիտե, կազմվեցին աշխարհագոր ազգա-
յին ջոկատներ: Բազմազգ Բաքվի հայկական
աշխարհագոր ջոկատի հրամանատար նշա-
նակվեց Պողոս Տեր-Դավթյանը, ով ջախջա-
խիչ հարված հասցրեց թշնամուն Շամախու և
Քլաջառի հատվածում:

Վշխատանքի բերումով գյուղերից բնակիչ-
ների որոշ մասը գնում էր Բաքու՝ աշխատելու
նավթահորերում. պատերազմն իր հետ բերեց
ժողովրդի ծանր սոցիալական վիճակ՝ սով,
աղքատություն, պարապուրդ: Խոտանանցի
ես մեկնել էին մեկ տասնյակից ավելի երի-
տասարդներ: Այդ ժամանակահատվածում
Բաքվի Կոմունան իր գաղափարախոսությամբ
համակել էր շատերին, մարդիկ, հիասթափ-
ված ազգային, սոցիալական խտրականու-
թյունից, փնտրում էին նոր կյանքի եզրագծեր:
Խոտանանցի մի քանի երիտասարդ նույնպես
անդամագրվեցին Կոմունային: Խառը ժամա-
նակներ էին. մուսավաթականները «որսում»
էին Կոմունայի անդամներին: Նրանց դաժա-
նությանը զոհ դարձան Երեմ Գրիգորի Բաղդա-
գյուլյանը (Պողոս Տեր-Դավթյանի հորաքրոջ
որդին), Գերասիմ Ստեփանի Անտոնյանը:
Ավագ Ղազարյանը կարողացավ փախչել հայ-
րենի գյուղ. ավա՛ղ, այստեղ էլ բախտախնդիր
մարդիկ տեղի դաշնակցական խմբապետերին
մատնեցին որպես բոլշևիկյան լրտեսի: Ավա-
զին գնդակահարեցին: Հետագայում իր հու-
շերում գրել է Հայրենական մեծ պատերազմի
մասնակից, գնդապետ Արտաշես Ղազարյանը.
«Հորս նկատմամբ անիրավ վերաբերմունքի
պատճառով ես անդամագրվեցի բոլշևիկյան
կուսակցությանը»:

Ժամանակները մարդկանց մեջ գաղափա-
րական խլրտում էին ներարկում, քաղաքա-
կան պայքար, մարդիկ զգուշանում էին մեկը
մյուսից, միմյանց դավում, արդյունքը՝ գնդա-
կահարություն, փախուստ հարազատ բնօր-
րանից, իսկ թուրքին ձեռնտու էր նման պա-
ռակտունը: Առաջին աշխարհամարտում ևս
մեկ խոտանանցի հերոսացման ուղի անցավ:
Գյուղի քահանա տեր Մեսրոպ Տեր-Պետրո-
սյանի որդի Հովհաննես Տեր-Պետրոսյանն
աչքի ընկավ թե՛ աշխարհամարտում, թե՛ Լեռ-
նահայաստանի հերոսամարտում: Հովհան-
նեսը, 1912թ. ավարտելով Շուշիի թեմական
դպրոցը, 1913թ. զորակոչվեց ցարական բա-
նակ: Ավարտել է զինվորական սպայական ու-
սումնարանը և ստացել սպայի կոչում: 1914թ.
ավարտելով ուսումնարանը՝ աշխարհամար-
տի առաջին իսկ օրերից մեկնել է ռազմաճա-
կատ և կռվել մինչև 1917թ.:

Առաջին համաշխարհային պատերազ-
մի տարիներին օրհասական դարձավ ևս հայ
ժողովրդի ճակատագիրը: Հովհաննեսը, ով

հետևում էր մայր Հայաստանի իրադարձու-
թյուններին, անվարան վերադարձավ Հայաս-
տան՝ Ջանգեզուր, որտեղ սրվել էին ազգա-
միջյան հարաբերությունները: Հովհաննես
Տեր-Պետրոսյանը 1918-1921թթ. ղեկավարել
է Դավանի շրջանի ինքնապաշտպանության

ջոկատներից մեկը:

«Սինեցիները կազմում Զորամաս մը
հրամանատարութեամբ սպայ Տեր-Պետրո-
սյանի և մի քանի գործիչներու ուղեկցու-
թեամբ՝ 1921թ. փետրվար 21-ին կ'անցնի Դի-
զակ» (Վ.Գեորգյան: «Լեռնահայաստանի հե-
րոսամարտը»):

1920թ. Լեռնահայաստանը չէին ուզում
հանձնել խորհրդային իշխանությանը. բոլ-
շևիկյան խմբավորումներին խնդրված մու-
սավաթականները փորձում էին Ջանգեզուրը
վերցնել: Տեղեկն իր գորաջոկատներով պայ-
քարում էր համուն Լեռնահայաստանի անկա-
խության: Բոլշևիկները շրջան առ շրջան տա-
րածում էին իրենց իշխանությունը, դեռևս
պինդ միջուկ էր մնում Լեռնահայաստանը:
Ջանգեզուրը երկար համառեց, չհանձնվեց,
սակայն ներքին խռովություններն իրենց
արեցին. ժողովուրդը երկփեղկվեց: Մարդ-
կանց մի մասն անցավ բոլշևիկների կողմը:
Մեծ լարվածություն ստեղծվեց բոլշևիկյան
ու դաշնակցական կուսակցությունների միջև,
մարդիկ անհարկի կյանքով վճարեցին: Գյու-
ղի տարեց մարդիկ հուզումով էին պատմում
համագյուղացի, թուրքի դեմ կռված Բալասան
Բալասանյանի գնդակահարության մասին,
իբր Բալասանը զոհունի հարել է բոլշևիկյան
կուսակցությանը, Բալասանին գնդակահարեց
դաշնակ խմբապետը՝ Ողջի գետն անցնելիս:
Երբ ծիու վրա բերեցին Բալասանի դին, գյու-
ղամիջում հավաքված մարդկանց աչքի առաջ
քամին խաղում էր Բալասանի ճակատին
թափած մազափնջի հետ, իսկ սառած հա-
յացքն ասես ինչ-որ բան չհասցրեց ասել: Քար
լուրջունը ճեղքվեց լացուկոծից:

Մի քանի՝ ազգին «հավատարիմ» գյու-
ղացիներ խմբապետերին հավատացրին, որ
Հմայակ Տեր-Դավթյանը, ով Տեղեկի անձնա-
կան կապավորն էր, քահանայի որդի Հով-
հաննես Տեր-Պետրոսյանը ծառայում են բոլ-
շևիկներին: Տեղեկը հրամայեց գտնել նրանց
և իր մոտ բերել, բարեբախտաբար նրանք
հասցրին փախչել Գորիս և խուսափել գնդա-
կահարությունից: Հետագայում Հմայակ Տեր-
Դավթյանը դարձավ բրիգադային կոմիսար,
սակայն 1937-ին դարձավ ռեպրեսիայի զոհ:
Ջանգեզուրի խորհրդայնացումից հետո Հով-
հաննես Տեր-Պետրոսյանը 1921-30թթ. աշխա-
տել է դպրոցներում ուսուցիչ, դպրոցի տնօ-
րեն: Հեռակա կարգով ավարտել է Երեւանի
գյուղատնտեսական ինստիտուտը, աշխա-
տանքի անցել Հայաստանի հողժողովումստում
գլխավոր ագրոնոմ մինչև 1937թ.: Այդ թվին էլ
կտրվեց նրա կյանքի թելը սիբիրյան գնդանե-
րում. ևս մեկ ստալինյան զոհ:

1970-ական թվականներին, երբ աշխա-

տանքի անց գյուղի դպրոցում, դպրոցամերձ
ճանապարհին գտնվող տան արեւկող պա-
տի տակ նստած միակնանի տարեց պապիկի
հաճախ էի հանդիպում, բարեւում, անցնում:
Երբ հետաքրքրվեցի, թե ինչից է վնասվել աչ-
քը, պատմեցին, որ Առաջին համաշխարհա-
յին պատերազմի ժամանակ է կորցրել աչքը:
Կռվել է Անդրանիկի գորաջոկատում, եղել է
նրա գնդաջորդներից մեկը: Հետաքրքիր էր
նրա՝ գնդացի ծեռք բերելու պատմությու-
նը: Երբ թուրքերը վրա տվին, գյուղում զենք,
զինամթերք չկային: Մինչ այդ գյուղացիները,
որ ապրում էին աղքատիկ վիճակում, տա-
նուտերից խնդրեցին հարեւան Կուբաթլուի
գյուղերից ոչխար առնել, որ դիմակայելն
աղքատությանն ու սովին: Տանուտերը գյուղի
աչքաբաց և ազերի լեզուն իմացող Շամիրին
ուղարկում է աղբբեջանական գյուղ: Շամի-
րը մեծ քանակով ոչխար է բերում բաժանում
գյուղացիներին: Որոշ ժամանակ անց, երբ
պատերազմի թնդյունն է տարածվում, Շամի-
րը, օգտվելով ստեղծված իրավիճակից, առա-
ջարկում է իրեն հատկացնել մի քանի տաս-
նյակ ոչխար՝ զենք ու զինամթերք ծեռք բերե-
լու, քանզի գյուղն անպաշտպան էր: Գյուղն
ընդառաջում է խելացի երիտասարդին: Շամի-
րը ծեռք է բերում նաև մի գնդացի և բարձ-
րանում գյուղից պատկառելի հեռավորության
վրա գտնվող Տափասար ու Մեծ Հալանլար
կոչվող դաշտավայրերը, որտեղ ևս ընթանում
էին թե՛ մարտեր թուրք ելուզակների դեմ:
Այնուհետև միանում է Անդրանիկի գորաջո-
կատներից մեկին և կռվում անձնագործ մին-
չեւ կորցնում է աչքը: Գյուղացիները պատկա-
ռանքով են տալիս խիզախ համագյուղացու՝
գնդաջորդ Շամիր Պողոսյանի անունը: Ուշա-
ցած ափսոսանք. ժամանակին չզրառվեց ևս
մի հուշապատում, ժամանակին չբայելեցինք
ես մի կաճանով...

Առաջին աշխարհամարտի տարիներին
իրադրությունն անկառավարելի էր ոչ միայն
Կովկասյան ռազմաճակատում:

Օգտվելով խոշոր տերությունների սան-
ձագերծած պատերազմական իրավիճակից,
Հայաստանում, հատկապես Ջանգեզուրում,
ազերի բնակիչները ծեռքները ծալած չնստե-
ցին:

1918-19թթ. ազգամիջյան ընդհարումները
սրացան, որոնց հետեւանքով Նորաշենիկի
ենթաշրջանի հայկական գյուղերի բնակիչ-
ներն Օխտար, Դովլուս, Ղարաղա և Տորթնի
գյուղերի աղբբեջանցի բնակչությանն առանց
նյութական ու ֆիզիկական վնաս հասցնե-
լու՝ պայմաններ են ստեղծել նրանց համար՝
փոխադրվելու Կուբաթլիի շրջան: Չճայած
հայերի բարյացակամությանը՝ աղբբեջանցի-
ների մեջ կային արյունաբերու, կրիժառու մար-
դիկ, ովքեր դարանակալ իրենց «մարդոսն»
էին անուն: Արնախում մուլուցքով հայտնի էր
Տորթնի գյուղից Ավրիլազիմ բեկը, ում գլխա-
վորությամբ ստեղծված բանդան Նորաշենիկի
ենթաշրջանում մարդկանց «որս» էր անում,
հատկապես Խոտանանի անտառախիտ տա-
րածքում ժամանակ առ ժամանակ անպատ-
մելի զազանաբար ոճիրներ իրականացնում:
Խոտանանցի հյուսիս գտնվող «խուրթի չման»
հանդամասում թուրքերը դաժանորեն խոշ-
տանգելով գլխատեցին երիտասարդ անաս-
նապահներ Հայրապետ Սարգսի Բաղալյա-
նին, Մաթեոս Բալայի Մաթեոսյանին, Եփրեմ
Հակոբի Հայրապետյանին, Աստատուր Առդ-
մոնի Բալասանյանին, Գրիգոր Սողոմոնի Տեր-
Դավթյանին (Պողոս Տեր-Դավթյանի եղբորը),
Հովհաննես Հայրապետի Բաղասարյանին,
Գաբրիել Առուստամի Մովսիսյանին:

Թուրքերը հրդեհում էին խոտի դեզերը,
գողանում անասուններ և միայն թուրքին բնո-
րոշ այլ վայրապետություններ թույլ տալիս: Հայ
այրերի կողքին աներեր պայքարում էին նաև
քաջասիրտ կանայք: Գյուղացիները հիաց-
մունքով են պատմում համագյուղացի Անճա-
նի խիզախության մասին:

Գյուղից հյուսիս՝ բարձրադիր «Փոքր Հա-
լանլար» կոչվող զոգահովտում, փոքրիկ լճակ
կար, որ կոչվում էր «Գյուլեն դրաղ»: Գոգահով-
տի հարեւանությամբ էր գտնվում Վանահա-
բերդն իր խիտ անտառածածկությամբ:

Գորիսի ֆրանս-հայկական սրբանորոգային կենտրոնը շուկրով կհամալրվի նոր ծառայություններով

Էջ 3
Մաե համաձայնագիր ստորագրում շեշտը դնելով այն կետին, որ սա բուժում չէ, այլ գործողություն, որը հնարավորինս փորձում է կանգնեցնել վտանգը:

Չնայած այն մի շարք դեպքերում ազդեցիկ բնույթ ունի եւ կարող է կրկնվել, էլ չեն ասում, որ ստենտավորված հիվանդը շարունակում է անառողջ ապրելակերպ վարել՝ խմել, ծխել, թերշարժուն կյանք վարել, ճարպոտ սնունդ ուտել, դեղորայքը կիսատ-պռատ ընդունել եւ, այդ ամենով հանդերձ, մահ գրանցվելու դեպքում գալիս ու մեղադրում են բժշկին: Ընդհանրապես մեր մասնագիտության դժվարություններից մեկն էլ այն է, որ հարյուրավոր հիվանդներ, ապրելով բժշկի ցուցաբերած համապատասխան բուժօգնություն շնորհիվ, Աստուծո կամոք, ասում են՝ դե օրգանիզմն ամուր է, բայց երբ մտնում են ռիսկային խմբի մեջ, եւ մահ է գրանցվում, ասում են՝ բժիշկը սպանեց:

- Գորիսի ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոնը նույնպես ներառված է հոկտեմբերի 1-ից նոր կարգով գործող սոցիալաբեթի շահառուներին բուժօգնություն տրամադրող բուժհաստատությունների ցանկում:

- Մեր պետական այրերը, համծին առողջապահության նախարար Լեւոն Ալթունյանի,

օգտվելու կարգը:

- Տեղյակ ենք, որ կենտրոնի ֆրանսիացի հիմնադիրները պարբերաբար ակցիաներ են կազմակերպում, նվազեցնում ծառայությունների գինը:

- Ֆրանսիացի հիմնադիրների հետ սերտ համագործակցության շրջանակներում կենտրոնում պարբերաբար կազմակերպվում են ակցիաներ՝ 30-50 տոկոսի սահմաններում: Գաղտնիք չէ, որ այսօր ամբողջ ՀՀ-ում սրտի կորոնարոգրաֆիայի ամենացածր գինը սահմանված է Գորիսի ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոնում, նույնը կարելի է ասել նաեւ ոչ դեղապատ մեկ ստենտի արժեքի մասին: Եթե մայրաքաղաքում սրտի կորոնարոգրաֆիան արժե 150 հազար դրամ, որի մեջ որոշ հիվանդանոցներում անգամ լրացուցիչ անալիզների գումարը չի մտնում, ապա մեր կենտրոնում 3-4 ամիս ակցիայի շրջանակներում 80 հազար էր, այժմ՝ 100 հազար դրամ՝ ներառյալ անհրաժեշտ բոլոր հետազոտությունները, անալիզները: Եթե ոչ դեղապատ մեկ ստենտն այլ կենտրոններում արժե 800 հազար, ապա մեզ մոտ՝ 600 հազար դրամ: Ինձ թվում է վերոնշյալ տվյալներն արդեն իսկ խոսում են: Էլ չեն ասում, որ մայրաքաղաքում հետազոտվելու, բուժվելու համար հիվանդը

հայտ է):

- Վարչապետի այցը ճանաչողական բնույթ ունեւ, եւ մեզ համար ուրախալի է փաստը, որ վարչապետ Կարեն Կարապետյանի մարզ կատարած այցի կանգառներից մեկն էլ մեր կենտրոնն էր: Սա նշանակում է, որ մեր հաստատությունը մարզում լուրջ դերակատարություն ունի:

Ինչ վերաբերում է ճանապարհի նորոգման խնդրի բարձրացմանը, ապա ներկայացրել ենք, բայց այս պահին դրա լուծման համար կոնկրետ ծրագիր չկա, խոստում չի տրվել, բայց հանձնարարվել է տեղական, մարզային իշխանություններին հարցն ուշադրության կենտրոնում պահել: Մենք էլ մեր հեթոքն փորձում ենք լուծման ուղիներ գտնել թեկուզ բարեբարների միջոցով, բայց առայժմ գոհացուցիչ արդյունքի չենք հասել:

- Տեղյակ ենք, որ մյուս կարելու խնդիրը ֆինանսական բնույթի է՝ պայմանավորված հիվանդների՝ տարիներով հիվանդանոցի պարտք մնալով:

- Եթե հակիրճ ասեմ հիվանդների պարտքի չափը, ցավոք, դեռեւս չի նվազում, եւ շատ հիվանդներ շարունակում են պարտք մնալ, որի վերաբերյալ, իհարկե, կոնկրետ թիվ չեն հրապարակի: Կարող եմ միայն ասել, որ այն

նաեւ այս տարվա հունիսի 27-ին անցկացված «Համագային վստահություն» խորհրդի կազմակերպած «Տարվա բժիշկ եւ տարվա բուժիմնարկ-Հուսո Աստղ-2017» վեցերորդ ամենամյա ազգային մրցանակաբաշխության ընթացքում Գորիսի ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոնի «Տարվա առողջարանային պայմաններին համապատասխան եւ բարեգործական գործունեություն իրականացնող մարզային սրտանոթային կենտրոն» անվանակարգում մրցանակի արժանանալը:

- 2014թ. մեր թերթին տված հարցազրույցում նշել էիք, որ Ձեր ամենամեծ ձգտումը որակյալ եւ արդյունավետ սպասարկման շնորհիվ ճանաչում ու հեղինակություն ձեռք բերելն է ոչ միայն Հայաստանում, այլև՝ նրա սահմաններից դուրս: Երեք տարի անց կարո՞ղ եք ասել, որ Ձեր նպատակն իրականություն է դառնում:

- Կարող եմ ասել, որ այդ ճանապարհին ենք: Վերջերս կայացած սրտաբանների եվրոպական 6-րդ համաժողովի բանախոսներից մեկն էլ եւս էի ու ներկայացրի մեր կենտրոնում իրականացվող աշխատանքները, որոնք մշտապես արժանանում են եվրոպացի լավագույն մասնագետների բարձր գնահատականին: Եվ դա՝ շնորհիվ բժշկական մեր ճիշտ, արդիական մոտեցումների, աշխարհում ընդունված համապատասխան ցուցումներով, մեթոդներով առաջնորդվելու եւ այլն: Թող անհամեստություն չթվա, բայց կենտրոնի գնահատականի վկայություններից մեկն էլ օրվա ընթացքում տարբեր կենտրոններից մեզ ուղարկված կորոնարոգրաֆիայի դիսկերն են՝ համապատասխան խորհրդատվություն ստանալու ակնկալիքով: Անուններ չտալով հանդերձ չեն կարող չնշել, որ հետազոտվելու, համապատասխան բուժօգնություն ստանալու նպատակով մեր կենտրոն են դիմում նաեւ նշանավոր պետական այրեր, տարբեր բնագավառների ներկայացուցիչներ:

Մենք չենք բավարարվում ձեռք բերվածով եւ ավելի զարգացնելով մեր հնարավորությունները՝ փորձում ենք պահել հանրապետությունում առաջատարներից մեկը լինելու դիրքերը, ինչի մասին վկայում են ոչ միայն հիվանդները, այլև լավագույն մասնագետները: Համոզված եմ՝ եթե մեկ օր կանգ առնենք, կկորցնենք մեր ձեռք բերած դիրքը:

- Կենտրոնը համարված է լավագույն սարքավորումներով, բայց չենք կարող չասել, որ յուրաքանչյուր բուժհաստատություն, նախեւառաջ, իր մասնագետներով պայմանավորված՝ կարող է առաջատար համարվել:

- Շուտով երկու հոգի իրենց հետբուհական վերապատրաստումը կանցնեն մեր կենտրոնում: Միշտ ասել եմ, եթե մարզից կան բժշկական համալսարանի ուսանողներ, ովքեր ընտրել են սրտաբանի մասնագիտությունը, կարող են այստեղ վերապատրաստում անցնել, հետագայում գործունեություն ծավալել: Այս առումով մեր տրամադրվածությունը բոլորովին այլ է. հնարավորինս մեր փորձը փոխանցենք ուրիշներին: Ավելին ասեմ՝ մեր երրորդ տարվա օրդինատորը, ով այս տարի ավարտեց եւ կընդունվի մեզ մոտ աշխատանքի, բժիշկ է, ով արդեն իրականացրել է մի շարք հիվանդների ստենտավորում, այդ թվում սուր ինֆարկտի դեպքում: Դա այն դեպքում, երբ երեւանյան կլինիկաների օրդինատորները լավագույն դեպքում ընդամենը կատարում են կորոնարոգրաֆիկ հետազոտություն:

- Ասվածին որպես ամփոփում ի՞նչ կավելացնեք:

- Ցավալի է, երբ, հատկապես Գորիսի տարածաշրջանում, շարունակվում են սուր ինֆարկտից մահացության դեպքեր գրանցվել, երբ ընդամենը ռուպեների ընթացքում կարելի է հասնել կենտրոն եւ խուսափել վատթարագույնից: Սա նշանակում է, որ դեռ աշխատանք ունենք կատարելու, դեռ չենք հասցրել բնական մեջ արմատավորել բժշկին դիմելու ավանդույթը, այն է՝ կրթականակի շրջանում ցավի դեպքում անմիջապես դիմել բժշկի:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԱՆ



վերջերս դրական մեծ փոփոխություն կատարեցին, ըստ որի՝ հոկտեմբերի 1-ից սոցիալական փաթեթի շահառուների բժշկական օգնության տրամադրումն իրականացնում է ապահովագրական ընկերությունը: Նախկինում բուժհաստատությանը տրված սահմանափակ բյուջեի պատճառով շատերը դուրս էին մնում անվճար բուժօգնություն ստանալու հնարավորությունից, բյուջեն սպառվում էր, եւ սոցիալաբեթի շահառու, ով շտապ բուժօգնության կարիք ուներ, արդեն չէր կարողանում օգտվել իր արտոնությունից: Իսկ կատարված դրական փոփոխության շնորհիվ նախ՝ վերացավ բյուջեի սահմանափակումը եւ երկրորդ՝ բարձրագավ բուժօգնություն տրամադրելու որակը՝ պայմանավորված ապահովագրական ընկերությունների գործունի ու կրկնակի վերահսկողության մեխանիզմով: Փաստորեն, բացի առողջապահության նախարարությունից, որպես ապահովագրական հատուցումը վճարող եւ բժշկական ծառայությունների մատուցումը կազմակերպող կողմ, բժշկական ծառայությունների մատուցման ընթացքին եւ հասցեականությանը կիստեսն են նաեւ ապահովագրական ընկերությունները: Սոցիալաբեթի շահառու հիվանդն իր ցանկությանը ընտրում է ՀՀ առողջապահության նախարարության հաստատած բուժհաստատությունների ցանկից այն բուժհաստատությունը, որտեղ ցանկանում է ստանալ բուժօգնություն, որից հետո տրամադրված բժշկական ցուցման հիման վրա ապահովագրական ընկերությունը հաստատում է բժշկական ծառայության հատուցումը կամ ներկայացնում հիմնավոր մերժում: Նշեն, որ Գորիսի ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոնը նույնպես ներառված է այդ ցանկում:

Կենտրոնում շարունակվում է գործել «Կյանքի փրկության ստենտ» ծրագրի շրջանակներում, ինչպես նաեւ օրենքով սահմանված այլ դեպքերում անվճար ծառայություններից

նաեւ այլ ծախսեր է կատարում:

Ավելին՝ շուտով կենտրոնը կմատուցի էնդոկրինոլոգիական ծառայություն, կիրակաճանցի դուպլեքս, դուպլեքս հետազոտություն: Զցանկանալով որեւէ մեկին վիրավորել, քամի որ ինքս անձամբ տեղյակ չեմ, բայց մարդկանց լսելով, մարզում դրանց կարիքը խիստ զգացվում է: Նախատեսում ենք ունենալ պրոֆեսիոնալ մասնագետներ, նույնիսկ նրանց հետ արդեն համապատասխան պայմանավորվածություն կա, ովքեր կիրականացնեն ոչ միայն հետազոտություններ, այլեւ կկատարեն անհրաժեշտ բուժական գործողություններ: Նախկինում մեկ-երկու ծայրահեղ դեպք եղել է, որ այլ ամբոթների վիրահատական միջամտություն ենք կատարել, բայց եւ այն կարծիքին եմ, որ յուրաքանչյուր հարցում պետք է պրոֆեսիոնալ մոտեցում ցուցաբերել:

- Ձե՞ր նախածեռնությամբ, թե՞ ֆրանսիացի հիմնադիրների հետ համատեղ եք ծրագրեր կազմում:

- Ֆրանսիացիները ներդրումներ են կատարում, բայց ինձ հետ՝ որպես բուժական մասի ղեկավար, խորհրդակցում են, օրինակ, ինչ ծառայություն կարելի է ավելացնել, ինչպես կազմակերպել այդ աշխատանքները եւ այլն: Ոչ մի որոշում առանց մեզ հետ փոխհամաձայնության չի իրականացվում, քանի որ արդեն մի թիւ ենք՝ ընդհանուր նպատակներով: Կարգերը նույնպես մենք ենք ընտրում, բայց վերապատրաստումներն անց ենք կացնում նրանց հետ համատեղ:

- Գորիսի ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոնի առաջնային խնդիրներից մեկը, որն այդպես էլ լուծում չի ստանում, մայրուղուց կենտրոն հասցնող անբարեկարգ ճանապարհն է՝ ընդամենը 1 կմ երկարությամբ: Ենթադրում ենք, որ մարտին կենտրոն այցելած ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանին ներկայացրել եք այդ խնդիրը (խմբ.՝ չնայած առանց դրա էլ ակն-

կբավականացնի կենտրոնի աշխատակազմի ամբողջ մեկ տարվա աշխատավարձը տալուն, դեռ մի բան էլ ավելին: Տարբեր մեթոդներ կան պարտքերի գանձման համար, բայց թե՛ ֆրանսիացիները, թե՛ մենք դեմ ենք մարդկանց ունեցվածքը բռնագրավելու միջոցով այդ հարցը լուծելուն, ինչը բարոյական չենք համարում: Ոչ մի հիվանդ չի կարող ասել, որ ծանր վիճակում դիմել է մեր կենտրոն, եւ անվճարունակության պատճառով նրան չի ցուցաբերվել համապատասխան բուժօգնություն, անգամ եթե նա չի մտնում պետպատվերի շրջանակներում բուժօգնություն ստացող շահառուների խմբի մեջ: Երբեմն անհրաժեշտ գործողությունն իրականացվում է ազգիվ խոսքը հիմք ընդունելով, բայց ժամանակը ցույց է տալիս, որ այդպես էլ վճարում չի կատարվում: Բնականաբար, ֆինանսական խնդիրը լուրջ հարված է հիվանդանոցի գործունեությանը, քանի որ հիվանդների կատարած վճարումների շնորհիվ են ձեռք բերվում անհրաժեշտ գործիքները, դեղորայքը, վճարում աշխատավարձը, կատարվում համապատասխան վճարումներ եւ այլն: Մեր ծառայության թանկությունը, նախեւառաջ, պայմանավորված է գործիքների միանգամյա օգտագործմամբ, աշխարհում հայտնի լավագույն ընկերությունների արտադրած ստենտների կիրառությամբ, դեղորայքով եւ այլն:

- Ներկայացրեք կենտրոն դիմող հիվանդների աշխարհագրությունը:

- Թող ամպագոռոռ չինչի, բայց ուրախությամբ պետք է նշեմ, որ հիվանդների աշխարհագրությունը բավականին լայնացել է: Մեզ են դիմում ոչ միայն Սյունիքի մարզի տարածաշրջաններից, այլեւ Երեւանից, Վայքից, Եղեգնաձորից, Գյումրուց, Վանաձորից, Արցախից, նույնիսկ ՌԴ-ից: Սա խոսում է Գորիսի ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոնի ճանաչման, բուժանձնակազմի հանդեպ վստահության մասին: Սրա վկայությունն է

Քաղաքացիների սպասարկման գրասենյակի պաշտոնական բացման արարողություն

Նոյեմբերի 2-ին Մեղրի համայնքում պաշտոնապես բացվեց Քաղաքացիների սպասարկման գրասենյակը (ՔՍԳ):

Գրասենյակը հիմնադրվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄԳԸ) կողմից իրականացվող «Լավ

ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության տեղական ինքնակառավարման վարչության պետ Ա.Գիլոյանը, ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության տնօրեն Դեբորա Գրիգերը (ուղիղ հեռախոսակցությամբ), ԳՄԳԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարա-



տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում Գերմանիայի տնտեսական համագործակցության եւ զարգացման դաշնային նախարարության աջակցությամբ ու Հայաստանում Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության (ՇԶԳ) ու ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության համաֆինանսավորմամբ: Ծրագիրը իրականացվում է ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության (ՏԿԶՆ) հետ համատեղ:

Վային Կովկասում» ծրագրի հայաստանյան թիմի ղեկավար Քաթրին Շեֆերը, Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության ծրագրի մասնագետ Ս.Յոլի-հաննիսյանը, Մեղրի համայնքի ղեկավար Մխիթար Ջաքարյանը: Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Աննա Ավետիսյանը ներկայացրեց գրասենյակի կողմից մատուցվող ծառայությունները: «Քաղաքացիների սպասարկման գրասենյակը հիմնվել է Մեղրիի համայնքապետարանի կողմից հանրությանը մատուցվող ծառայությունները

պարզեցնելու եւ դյուրացնելու նպատակով, եւ ներդրված համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի շնորհիվ բարձրորակ ու համաչափ ծառայություններ ստանալու համար ինչպես քաղաքացիների, այնպես էլ տեղում բնակավայրում խնայելով ծեր ժամանակը: Քաղաքացին կարող է առցանց հետեւել տեղական ինքնակառավարման գործունեությանը, դիմումի ընթացքին, ստանալ տեղեկատվություն համայնքի վերաբերյալ, մասնակցել առաջնահերթությունների քննարկմանը»:

Քաղաքացիների սպասարկման գրասենյակի հիմնումը թույլ կտա «մեկ պատուհան, մեկ կանգառ» սկզբունքի համաձայն քաղաքացիներին մատուցել բարձրորակ ծառայություններ, բարձրացնել համայնքապետարանի աշխատանքի արդյունավետությունը ու թափանցիկությունը, դյուրացնել համայնքապետարանում իրականացվող վարչական գործընթացները:

Քաղաքացիներ սպասարկման գրասենյակը կապահովի համայնքային ծառայությունների մատուցումը «լավ կառավարման» սկզբունքների համաձայն:

Պաշտոնական արարողությանը հաջորդեց հյուրասիրությունը եւ պատվավոր հյուրերին հանձնվեցին Մեղրու մրգերից պատրաստված անուշեղեն:

meghri.am

Հայրենիքի պաշտպանն ապրում է այնքան, որքան նրան հիշում են



Հայրենի եզերքի պաշտպանության համար Արա Կոստանդյանը հատուցեց սեփական կյանքով ընդամենը 27 գարուն բոլորած: Երբ Կապանի սահմաններին սկսեցին զինված ընդհարումները, նրա կայացրած որոշումը չուշացավ: 1992 թվականի հունիսի 17-ից Արան արդեն հայրենի սահմանների պաշտպանների հետ էր: Առաջին մարտական մկրտությունը ստացավ Օռած քարում, այնուհետեւ եղան նոր մարտեր՝ մեկը մեկից բախտորոշ ու անգիջուն՝ Ղազանչի, Ջանբար, Սրաշեն, Տրիցառի, Ջանգեղան, Ղոնաղի: Ազատամարտիկ կյանքն ընդհատվեց Հորադիզ մատույցներում 1994-ի հունվարի 9-ին...

պատմության զինվառ կերտողներ»:

Հուշերով եւ գնահատանքի խոսքերով հանդես եկան Բեյիթ թաղային լիազոր Ռաֆիկ Հայրապետյանը, Արայի մարտական ընկեր Գալուստ Ջահանգիրյանը, դպրոցում նրան դասավանդած ուսուցչուհի Լեւա Գաբրիելյանը, Կապանի N1 դպրոցի ուսուցչուհի Աստղիկ Օհանջանյանը, ում դասարանն անվանակոչված է Արա Կոստանդյանի անվամբ: Գրքույկի բովանդակությանն անդրադարձավ երկրագիտական թանգարանի տնօրեն Գրիշա Սմբատյանը, ով կարեւորեց նման գրքույկներ ստեղծելու նախաձեռնությունը՝ Կապանի ազատամարտի պատմությունը ստեղծելու գործում: Միջոցառման կազմակերպիչներին երախտագիտության խոսք հղեց զոհված ազատամարտիկ քույրը, ով նույնպես այն միտքը հայտնեց, որ տակավին պիտի գրվի Կապանի ազատամարտի պատմությունը նաեւ այն կռված տղաների հուշերի հիման վրա, ովքեր ապրում են մեր շարքերում:

«Ընկած տղերքն օրինակ են մեզ համար, օրինակ սերունդ կրթելու եւ դաստիարակելու, մարդկային կեցվածք ձեւավորելու գործում, հայրենիքի նկատմամբ վերաբերմունք դաստիարակելու իմաստով: Նրանցով ենք մենք վերագտնում մեր հայկականությունը: Իրապես թող վարակիչ դառնան բոլորի համար զոհված տղաների սխրանքները, եւ շարունակական լինեն նման միջոցառումները: Բոլորս պարտավոր ենք հիշել նրանց եւ պարտական ենք բոլոր նրանց, ովքեր «մահ իմացյալը» սրտում կերտեցին այս օրը», - շնորհանդեսի ավարտին ասաց Քաջարանի հոգեւոր հովիվ տեր Շիրակ քահանա Խանոյանը:

Շնորհանդեսին հինչեցին հայրենասիրական երգեր: Ելույթներն ուղեկցվում էին Արայի մասին պատմող լուսանկարների ցուցադրությամբ: Նման միջոցառումները գալիս են հաստատելու ճշմարտությունը, որ հայրենիքի զինվորն ապրում է այնքան, որքան նրան հիշում են...

Գնահատանքի միջոցառում

«Կապանցի արվեստագետներ» շարքի հերթական միջոցառումը, որ կազմակերպել էր Կապանի արվեստի քոլեջի դասախոս Հասմիկ Գրիգորյանը, նվիրված էր գեղանկարիչ, վաստակաշատ մանկավարժ Հրանտ Էլչյանին: Քոլեջի Կահագն Ստամբուլյանի անվան երգեհոնային դահլիճի ճեմնարահուն ցուցադրված էին արվեստագետի գեղանկարչական աշխատանքները, միջոցառման մասնակիցները նախ որոշակի պատկերացում կազմեցին նրա գեղագիտական նախասիրությունների մասին:

Հրանտ Էլչյանը դպրոցն ավարտելուց հետո ավարտել է գեղարվեստի ուսումնարան, ապա գերագանցությամբ՝ Խ.Արմյանի անվան մանկավարժական ինստիտուտի գեղանկարչության բաժինը: Գեղանկարչի առաջին ցուցահանդեսը բացվել է Կապանի երկրագիտական թանգարանում, նրա ստեղծագործությունները ցուցադրվել են Կուրսի, Օրյոլի, Լիպեցկի, Բելգորոդի ցուցահանդեսներում, նրա բազմաթիվ աշխատանքներ գտնվում են տարբեր երկրների մասնավոր հավաքածուներում՝ Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Լոս Անջելես, Սարատով եւ այլուր:



Միջոցառումը կառուցված էր այնպես, որ Էլչյանից էր Հրանտ Էլչյանը պատմում իր ստեղծագործական ուղու մասին: «Պատանի տարիքում հանդիպել եմ մի գեղանկարչի՝ Սարգիս Մանգասարյան, բնանկար անելու համար, եւ ինձ զարմացրել է, թե ինչպես մարդ արարածը կարող է փորք կտավի մեջ աշխարհն այդքան գեղեցկացնել, նաեւ գիտակցեցի, որ պրոֆեսիոնալ մտածողություն է անհրաժեշտ, փնտրեցի եւ գտա Մարատ Նուրիջանյանին», - այդպես ներկայացրեց գեղանկարիչն իր առաջին ուսուցիչներին:

Ինչի՞ համար է զոջում Հրանտ Էլչյանը. «Բոլոր արածներիս համար չեմ ավստում, չարածներիս համար եմ ավստում»: Ստեղծել է գեղանկարչական աշխատանքների շարքեր, որոնցից առանձնացնում է մեկը, որն ամփոփում է երեք գեղանկար՝ «Սոււճայիթ», «Երկրաշարժ», «Արահետ դեպի Նախիջեւան»:

- Պիտի հետ դառնանք դեպի մեր նախնիները, պիտի չընկճվենք այդ դժվարությունների ճանապարհին, - բացատրում է եռանկարի իր գեղագիտական ընկալումը:

Էլչյանից սիրելի ուսուցչին բարեմաղթանքի խոսքեր հղեցին նախկին սաները, ովքեր սովորում են Երեսանի պետական գեղարվեստի ակադեմիայում: Իսկ քոլեջում սովորող իր սաներն անակնկալ մատուցեցին՝ իրենց մանկավարժին հանձնելով աննկատ արված ընկերական շարժեր:

Կապանի մշակութային կյանքում եւ աճող սերնդի գեղագիտական դաստիարակության գործում ներդրած ավանդի համար գեղանկարիչը պարգևատրվեց Կապանի քաղաքապետարանի պատվոգրով:

«Բավական է՝ ուշացած խոսք ասեմք, եկեք խոսք ասեմք այն ժամանակ, երբ մարդիկ մեր կողքին են, երբ լսում եւ տեսնում են, որ իրենք գնահատված են: Ուրիշ ոչինչ արվեստագետին պետք չէ», - գնահատանքի իր խոսքում նկատեց «Օժիածան» առաջնորդների կրթական կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Սուսաննա Մարտիրոսյանը:

Կապանի արվեստի պետական քոլեջի տնօրեն Վարդան Քոչարյանը հանձնումը հայտնեց, որ կշարունակվի նման հանդիպումների շարքը, քանզի եւ արվեստագետներ ունենք, եւ նրանց ներկայացնելու ժամանակ: Միջոցառման ավարտին Հրանտ Էլչյանը եւս երախտագիտություն հայտնեց հանդիպման կազմակերպիչներին, բոլոր ներկաներին:

Նրան հանձնվեց իր գեղանկարներն ամփոփող ալբոմ:

Այնուամենայնիվ, ինչո՞վ է զբաղվում գեղանկարիչ Հրանտ Էլչյանը: Այսպիսի մի պրոգնոզիկ հարցով վերջում դիմեցինք նրան. «Հիմա դասախոսում եմ, նորից ինձ հրավիրել են արվեստի քոլեջ, օգնում եմ իմ հրաշալի ուսանողներին»:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Վերին Խոյրանան. ամեն մի կաճան՝ մի հուշապատում

էջ 4
Ամռան շոգ ամիսներին գյուղացիները վրան էին խփում «Գյուլեն դրաղեն», ամասունները բարձրացնում այդտեղ, թուրքերը հաճախակի դարանակալում էին եւ հարմար պահ որսալով՝ անում իրենց սեւ գործը: Գյուլի գեղեցկադեմ, բոյբուսաթով, հաղթանդամ Աննանն իրիկվա հովին հանդից եկած գոմեշն էր կթում: Հարեւանի գոմշածագը, որ սովոր էր հանդում այդ գոմեշի կաթը «գողանալ», տրտինգ տալով եկավ ու սկսեց «օգնել» Աննանին: Աննանը մի երկու անգամ դնչին տալով հետ քշեց, բայց գոմշածագը չխրատվեց, այնժամ բարկացած կինը բռնեց գոմշածագի պոչից ու պատկառելի հեռավորությամբ շարտեց:

Թուրքերը, որ դարանակալ սպասում էին հարմար պահի՝ հերթական գոհին ճանկելու համար, սարսափահար փախան մտածելով, որ եթե կինն այդ ուժի տեր է, բա ամուսինն ինչպիսին կլինի:

Եվս մի դեպք. «Կալկա տափ» դաշտավայրում գյուղացիք խոտ էին հնձում: Ամռան թեժ արեւը խանձում էր ամեն ինչ, բայց աշխատանքը եռում էր: Խառը ժամանակներ էին, թուրքը մի կողմից, բուլեւիկը, դաշնակը խառնվել էին իրար. երբեմն էլ անկոչ մարդիկ էին հայտնվում, որ չգիտես՝ բշտամի՞ են, թե՞ յուրային...
Մի քանի երիտասարդ հրացանները հետ-

ները բերել, բացքրել էին խոտի դեփ մեջ, որ հանկարծապես վտանգի դեպքում կարողանան պաշտպանվել:

Հանկարծ լավեցին մոտեցող ծայրեր. ծիւղորներ էին տարբերաճաններ չունեցող զինվորական համազգեստով, հեծյալները պահանջեցին, որ եթե զենք ունեն հանձնեն եւ երիտասարդներն էլ հետեւեն իրենց, որ գնան բշտամու դեմ կռվելու, թե ով էր բշտամին, չպարզաբանեցին: Նրանց վայրագ հայացքները, ըմբոստ շարժումները հուշում էին, որ ինչ-որ ավազակաբարո մարդիկ էին ծպտված անհայտ զինվորական հագուստով: Երիտասարդներն ընդդիմացան, ասացին, որ զենք չունեն եւ իրենք էլ ոչ մի տեղ չեն գնալու: Զինվորական կոչեցյալը մոտեցավ խոտի դեփին եւ ցանկացավ փորփորել, կանայք մոտեցան մտածելով, որ իրենցից կամաչեն ու կթողնեն հեռանան, սակայն ավազակը կոպտորեն հրեց նրանց եւ լկտիաբար հայհոյեց:

Այնժամ հաղթահաասկ Աննանը մոտեցավ, բռնեց ըմբոստի վզից ու, ինչպես մի ժամանակ գոմշածագին, նրան շարտեց հեռու: Ընկերները սարսափահար հեծան ձիերն ու դիմեցին փախուստի:

Առաջին աշխարհամարտի տարբեր ճակատներում իրենց ներդրումն ունեին Խուրշուդ Գրիգորյանը, Ավագ Բալասանյանը, Հայրապետ Գրիգորյանը, Սակիչ Սողոմոնյանը,

Ավագ Մովսիսյանը, Կարապետ Հարությունյանը, Հայրապետ Մովսիսյանը, Համբարձում Մովսիսյանը, Լալա Գեւորգյանը, Բալա Մաթեոսյանը, Ավանես Ավանեսյանը, Հովհաննես Մաթեոսյանը:

Աշխարհամարտի տարիները դաժան ճակատագրի են արժանացրել ոմանց. զոհվեցի՞ն, անհայտ կորա՞ն, թե՞... Ցավալին այն է, որ սերունդների ամեն մի հերթափոխում անունները խամրում, չեն հիշվում, իսկ դա նման է մահվան:

Պետք է անուն առ անուն հիշել մարտադաշտում ընկածներին, թեկուզ եւ լինի մեկը, չէ՞ որ մարտադաշտում մեկն էլ զինվոր է...

Ցավոք, անուններ կան, որ չեն հուշագրվել, թող ներողամիտ լինեն, բայց սերունդներին պատգամ ամեն մի կաճան մի հուշապատում է, պեղեք այդ կաճանները եւ ամեն մի կաճանում կգտնեք փոշեպատ ոտնահետքեր, բազում ընկածների, որ կյանքը զոհաբերեցին այսօրվա մեր բաց կաճանների համար: Թող Աստծո օրհնությամբ լույս իջնի նրանց անհայտ շիրիմներին: Եվս մեկ անգամ գրառեք հայտնի զոհվածների անունները:

1. Գրիգորյան Տիգրան Հարությունի-1916թ.
2. Մովսիսյան Հարություն Ֆրանգյուլի-1916թ.
3. Բաղդասարյան Մեսրոպ Հայրապետի-1915թ.

4. Բաղդասարյան Պողոս Հայրապետի-1915թ.
5. Հայրապետյան Խուրշուդ-1916թ.
6. Դավթյան Թադեոս Սիմոնի-1915թ.
7. Բաբայան Մաթեոս Մկրտիչի-1916թ.
8. Գրիգորյան Հարություն Գրիգորի-1915թ.
9. Աղաջանյան Դուկաս Աղաջանի-1915թ.
10. Մաթեոսյան Աղա Մաթեոսի-1916թ.
11. Հայրապետյան Բեգլար Հակոբի-1916թ.
12. Աղաջանյան Բեգլար Աղաջանի-1918թ.
13. Բալասանյան Սարգիս Օհանջանի-1919թ.
14. Աղաջանյան Ավետիս Աղաջանի-1919թ.
15. Բալասանյան Գրիգոր Հարությունի-1917թ.
16. Գրիգորյան Աղալու Խաչատուրի-1922թ.

Եվ ամեն մի հայ պետք է հիշի, որ միասնությունն է զորեղ ուժը, որ հայրենին ամուր կպահի, եւ այս շիլաշփոթ քաղաքականության մեջ կոչ կանեն մեր տարագրված զավակներին. Ետ եկե՛ք, հայեր, Որ միաբանվեցե՛ք, Որպես անառիկ բերդ, Անկոտրում պարիսպ, Որ մոմակարոտ Մեր խաչքարերը Չբեկորվեն ու տարագրվեն Անտերությունից, Ետ եկե՛ք, հայեր...

Խոշոր հարկատուները

Այս արվա առաջին ինն ամիսների արդյունքներով մեր երկրի խոշոր հարկատուների ցանկը գլխավորում է «Գազպրոմ Արմենիա» ընկերությունը: Հաշվետու հունվար-սեպտեմբեր ամիսներին ընկերությունը պետական բյուջե է վճարել 32,25 մլրդ ՀՀ դրամի հարկեր եւ տուրքեր:

2017 ֆինանսական տարվա առաջին ինը ամիսներին Հայաստանի խոշոր հարկ վճարողների եւ նրանց կողմից վճարված հարկերի ու տուրքերի վերաբերյալ Հարկային ծառայության հրապարակած տեղեկատվության համաձայն՝ մեր երկրի խոշոր հարկատուների առաջին եռյակում հայտնվել են նաեւ «Գրանդ-Տոբակո» հայ-կանադական համատեղ ձեռնարկությունը եւ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությունը, որոնք պետբյուջե են վճարել համապատասխանաբար 22,18 մլրդ ՀՀ դրամ եւ 18,84 մլրդ ՀՀ դրամ:

Հայաստանի խոշոր հարկատուների ցանկի 4-րդ հորիզոնականում «Ալեքս Գրիգ» ընկերությունն է՝ 16,16 մլրդ ՀՀ դրամի վճարված հարկերով եւ տուրքերով: Առաջին հնգյակը եզրափակում է Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, որը վճարել է 13,14 մլրդ ՀՀ դրամի հարկեր եւ տուրքեր:

Իրենց հարկային պարտավորությունների կատարման արդյունքում Հայաստանի խոշոր հարկատուների առաջին տասնյակում են հայտնվել նաեւ «Գեոպրոմայնինգ Գոլդ» ընկերությունը (10,22 մլրդ ՀՀ դրամ), «Սիփիտ Օիլ Բորինգ» ընկերությունը (9,28 մլրդ ՀՀ դրամ), «Թեդուտ»-ը, որ վճարել է 9,13 մլրդ ՀՀ դրամի հարկեր ու տուրքեր, ինչպես նաեւ «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ընկերությունը (7,93 մլրդ ՀՀ դրամ) եւ «Ֆլեշ» ընկերությունը (7,92 մլրդ ՀՀ դրամ):

Ընդհանուր առմամբ, հունվար-սեպտեմբերին մեր երկրի 10 խոշոր հարկատուները միասին պետական բյուջե են վճարել շուրջ 147 մլրդ ՀՀ դրամ: dialogue.am

Հ.Գ. Հազար խոշոր հարկատուների ցուցակում տեղ են գտել նաեւ Սյունիքում գործող, ինչպես եւ Սյունիքում գրանցված հետեւյալ կազմակերպությունները՝ «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» (4,656,568.7 դրամ), «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» (1,725,791.1 դրամ), «Արմենիան մայնինգ քոնթրաքթոր» (1,555,912.8 դրամ), «Արպանիվ» (1,422,104.3 դրամ), «Ազարակի ՊՄԿ» (586,967.2 դրամ), «Սիսիանի բեռնաուղեորատար ավտոտրանսպորտային» (386,105.2 դրամ), «Կապան էնեժի» (228,066.5 դրամ), «Կապանի նորոգչին» (224,882.4 դրամ), «Մեդրու ճՇՇՇ» (189,280.3 դրամ), «Կայթ» (160,150.1 դրամ), «Ալ խալիդիա տուրիզմ» (147,583.3 դրամ), «Ոստանիկ հայրենյաց» (129,473.7 դրամ), «Ռոյալ փրինթ» (123,881.7 դրամ), «Գորիսի գամմա» (100,003.5 դրամ), «Կապանի բժշկական կենտրոն» (96,463.5 դրամ), «Կապանի ճանապարհների շահագործման եւ շինարարական» (96,101.5 դրամ) ընկերությունները:

Կապանի պետական բժշկական քոլեջը հայտարարում է 2017-18 ուստարվա ընդունելությունն հեռակա ուսուցման միջնակարգ կրթության հիմքի վրա «Ռեզագործություն» մասնագիտությամբ



Ուսման տեղողությունը 3 տարի է: Ուսումնառությունն իրականացվում է միայն վճարովի հիմունքներով: Շրջանավարտները դիպլոմներ ստանալուց հետո կարող են անմիջապես անցնել աշխատանքի ինչպես հանրապետության, այնպես էլ արտասահմանյան բուժօգնություններում (քոլեջի ավարտական դիպլոմը ճանաչվում է ԱՄՆ-ի բոլոր նահանգներում, ԱՊՀ-ի բոլոր երկրներում, եվրոպական մի շարք երկրներում): Գերազանց եւ բարձր առաջադիմության շրջանավարտներն իրավունք ունեն ուսումը շարունակելու ՀՀ պետական բուհերում՝ համապատասխան մասնագիտության երկրորդ կուրսում: Հեռակա ուսուցմամբ քոլեջ կարող են դիմել միջնակարգ կրթությամբ, միջին մասնագիտական եւ բարձրագույն կրթություն ունեցող անձինք: Քոլեջում ընդունելությունն իրականացվում է ընդունելության քննության «Կենսաբանու-

թյուն» առարկայի արդյունքների հիման վրա, ընդունելության կարգով սահմանված մրցութային հիմունքով ընդունելության քննություններից ութ եւ ավելի միավորներ ստացած դիմորդների միջեւ: Քոլեջում դիմորդի փաստաթղթերն ընդունվում են մինչեւ նոյեմբերի 21-ը, աշխատանքային օրերին ժամը 9.00-ից 16.00: Դիմորդն ընդունող հանձնաժողովին անձամբ ներկայացնում է հետեւյալ փաստաթղթերը. -դիմում, -կրթության մասին փաստաթուղթ, -չորս լուսանկար (3X4 չափի), -անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ զինվորական գրքույկ կամ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության բաժնիների կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ, կամ կացության վկայա-

կան, կամ փախստականի վկայական), -տեղեկանք առողջական վիճակի մասին (ձեւ N086/ու), -տեղեկանք բնակատեղից, -կցագրման վկայական (զինկոմիսարիատից), -արտոնության իրավունքը հաստատող փաստաթուղթ (եթե առկա է), -տեղեկանք աշխատանքի վայրից (առկայության դեպքում): Ընդունելության կազմակերպման ու անցկացման համար դիմորդը նախապես վճարում է 1000 դրամ: Ուսման վճարը մեկ տարվա համար կազմում է 180 հազար դրամ: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել քոլեջի ընդունող հանձնաժողով: **Հասցեն՝ ք.Կապան, Շահումյան 37ա: Հեռախոսներ՝ 5 25 70, 094 45 99 36**

ԽՆՃՈՐԵՍԿՈՒՄ Է ԿԱՌՈՒՑՎԵԼՈՒ

ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարար Սուրեն Կարայանի ներկայությամբ, հոկտեմբերի 8-ին «Հայիիդրոէներգանախագիծ» ինստիտուտի եւ «Դոփվեյմեյր Գարավենտա» խմբի (Doppelmayr Garaventa Group) վերագալին ընկերության անդամ «Գարավենտա ԱԳ» (Garaventa AG) շվեյցարական ընկերության միջեւ ստորագրվել է պայմանագիր:

Այս նպատակով հոկտեմբերի 6-8-ը Հայաստան էին ժամանել «Գարավենտա ԱԳ» ընկերության մարքեթինգի եւ վաճառքների մասով նախագահ Ֆիլիպ Բիները եւ վաճառքների գծով տնօրեն Թոմաս Կուրթը:

Պայմանագրով նախատեսվում է ԽՆՃՈՐԵՍԿ ԳՅՈՒՂՈՒՄ, «Հին ԽՆՃՈՐԵՍԿ» պատմամշակութային արգելոցի ծրագրի զարգացման շրջանակներում, «Հայիիդրոէներգանախագիծ» ինստիտուտի կողմից ֆունդիլոյորի կառուցում:

ՖՈՒՆԻԿՈՒԼՅՈՐ

Ֆունդիլոյորի կառուցման սկզբնական փուլում ներդրումները կկազմեն 6 միլիոն 100 հազար ԱՄՆ դոլար: ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարար Սուրեն Կարայանը կարեւորել է պայմանագրի ստորագրումը եւ ծրագրի իրականացումը Սյունիքի զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման եւ գրավչության բարձրացման համատեքստում:

ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարար Սուրեն Կարայանը կարեւորել է պայմանագրի ստորագրումը եւ ծրագրի իրականացումը Սյունիքի զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման եւ գրավչության բարձրացման համատեքստում:

mineconomy.am
11 հոկտեմբերի 2017թ.

«Հեպարիտ Ց»-ի գործով մեղադրողի եւ ամբաստանյալների բողոքները մերժվեցին

Վերաքննիչ քրեական դատարանը մերժել է «Հեպատիտ Ց»-ի գործով ամբաստանյալների եւ մեղադրողի բողոքները:

Դատախազ Ա.Բարսեղյանը վերաքննիչ բողոք էր ներկայացրել՝ պահանջելով ավելի խիստ պատիժ սահմանել Քաջարանի բժշկական կենտրոնի արդեն նախկին տնօրեն Վարդան Ավագյանի եւ անսփեզիուլոգ Երվանդ Ավագյանի նկատմամբ: Իրենց հերթին ամբաստանյալների պաշտպանները պահանջում էին արդարացման դատական ակտ: Վերաքննիչը մերժել է բողոքներն ու ստորադաս դատարանի դատական ակտը թողել անփոփոխ: Հիշեցնենք, որ առաջին ատյանի դատարանը Քաջարանի ԲԿ-ի նախ-

կին տնօրեն Վարդան Ավագյանը մեղավոր է ճանաչվել եւ դատապարտվել 1 տարվա ազատազրկման, փոխտնօրեն Վիրաբ Մանասյանը, ավագ բուժքույր Նորա Կարապետյանն ու գլխավոր բուժքույր Արմեդա Վանեսյանը՝ 6 ամսվա ազատազրկման: Չորս ամբաստանյալների վերաբերյալ դատարանը որոշել է պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան: Բժիշկ-անսփեզիուլոգ Երվանդ Ավագյանը նույնպես մեղավոր է ճանաչվել եւ դատապարտվել 1,5 տարվա ազատազրկման:

Ըստ մեղադրական եզրակացության՝ Քաջարանի ԲԿ-ի նախկին տնօրեն Վարդան Ավագյանը, փոխտնօրեն Վիրաբ Մանասյանը,

բժիշկ-անսփեզիուլոգ Երվանդ Ավագյանը, ավագ բուժքույր Նորա Կարապետյանն ու գլխավոր բուժքույր Արմեդա Վանեսյանը խախտել են սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները: Նրանց գործունեության հետեւանքով առաջացել է մարդկանց վիրուսային «Հեպատիտ Ց», ինչի հետեւանքով մի շարք քաղաքացիների առողջությանն անգրգուռությամբ պատճառվել է կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս:

news.am
26 հոկտեմբերի 2017թ.

Ուսանողական գիտաժողով՝ նվիրված Գորիսի պեպիտանալսարանի հիմնադրման 50-ամյակին

Հոկտեմբերի 5-6-ը Գորիսի պետական համալսարանում տեղի ունեցավ ԳՊՀ-ի հիմնադրման 50-րդ տարեդարձին նվիրված ուսանողական հանրապետական գիտաժողով, որին մասնակցում էր ԳՊՀ-ի եւ ՀՀ այլ բուհերի, որոնց թվում՝ Խ.Ա.բովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Երեւանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարանի, Գավառի պետական համալսարանի եւ Վանաձորի պետական համալսարանի շուրջ 60 ուսանող:

Գիտաժողովը մեկնարկեց լիագույն մար միտումով, որի ընթացքում բացման խոսքով հանդես եկավ Գորիսի պետական համալսարանի ռեկտոր Արտուր Դուկասյանը՝ նախ ողջունելով համալսարանականներին բու-

կյանքի կոչման հեռանկարով:

Ողջունի խոսք ասաց ԳՊՀ-ի ՌԲԳԸ նախագահ Սոնա Ալավերդյանը՝ շնորհակալություն հայտնելով գիտաժողովին մասնակցության հայտ ներկայացրած բոլոր ուսանողներին, նրանց ղեկավարներին, որոնք ջանք ու եռանդ չեն խնայել՝ ուսանողների գիտական հետաքրքրությունները ձեւավորելու, գիտահետազոտական հակումները զարգացնելու գործում, եւ նրանց շնորհիվ շատերն արդեն գիտության մեջ լուրջ նախաքայլեր են անում: Նա ներկայացրեց նաեւ օրակարգը եւ հաջող ընթացք մարտից գիտաժողովի աշխատանքներին: Լիագույն մար միտումով գեկուցումներով հանդես եկան ԳՊՀ-ի ՀՀՄ ֆակուլտետի մագիստրատուրայի «Պատմություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Նոննա Ալավերդյանը եւ ԳՊՀ ԲՄ ֆակուլտետի

ժողովի աշխատանքները շարունակվեցին յոթ բաժանմունքում՝ մանկավարժության, հոգեբանության եւ փիլիսոփայության, լեզվաբանության, գրականության, պատմության եւ իրավագիտության, կենսաբանության եւ քիմիայի, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների եւ տեղեկատվական տեխնոլոգիաների, տնտեսագիտության եւ կառավարման: Նիստերն ուղեկցվեցին ակտիվ քննարկումներով, ելույթներով:

Գիտաժողովի առաջին բովանդակալից օրվա ավարտին հյուրերը շրջայց կատարեցին Գորիսում, ծանոթացան քաղաքի պատմամշակութային հուշարձաններին, այցելեցին գորիսեցիների համար սրբավայր դարձած Ալսել Բակունցի տուն-թանգարան:

Հոկտեմբերի 6-ին ամփոփվեցին ուսանողական հանրապետա-

Մեղրիի մաքսակետում կանխվել է առանձնապես խոշոր չափի թմրամիջոցի ներկրումը հանրապետություն



Պետական եկամուտների կոմիտեի նախաքաղաքումային հսկողության ու մաքսանցման դեմ պայքարի վարչությունների համատեղ իրականացրած միջոցառումների արդյունքում Մեղրիի մաքսակետում կանխվել է առանձնապես խոշոր չափի՝ շուրջ 105 կգ «հերոին» տեսակի թմրամիջոցի ներկրումը հանրապետություն: Այս մասին հայտնում են ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնից: Ռեյտինգը գնում է ենթարկվել Իրանից Հայաստան ժամանած Թուրքիայի քաղաքացի Ֆերիդ Օզնեմիրի վարած, Վրաստանում գրանցված

«Օմերտրանսպորտ» ՍՊԸ-ին պատկանող «DAF» մակնիշի սառնարանային բեռնատարը, որն այնուհետեւ մաքսային ուժեղացված հսկողության պայմաններում, ուղեկցվել է Երեւան՝ մաքսային պահեստ, որտեղ իրականացվել է տրանսպորտային միջոցի մանրակրկիտ զննում: Բեռնախցիկում նախապես պատրաստված թաքստոցից հայտնաբերվել է 105 կգ «հերոին» տեսակի թմրամիջոց: Նախապատրաստված նյութերը փոխանցվել են ԱԼԾ քննչական ծառայությանը՝ վարույթ իրականացնելու նպատակով:

petekamutner.am
1 նոյեմբերի 2017թ.



հի կենդանու հրեյակահ առթիվ, որ նշանավորվում է նոր ու նշանակալից ձեռնարկով՝ հանրապետական գիտաժողովի շրջանակում հյուրընկալելով ՀՀ տարբեր բուհերի ուսանողներին, նրանց ղեկավարներին, ՌԲԳԸ-ների պատասխանատուներին, ապա համառոտ ներկայացրեց համալսարանի անցած ուղին, գիտակրթական ձեռքբերումներն ու զարգացման հեռանկարները: Ռեկտորը կարեւորեց նաեւ հանրապետական ուսանողական գիտաժողովի որպես այդպիսին առաջինը լինելու հանգամանքը, որ մեծապես կակտիվացնի ԳՊՀ-ի եւ ՀՀ այլ բուհերի ուսանողական գիտական համագործակցությունը՝ նոր ծրագրերի

«Մաքեմատիկա» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Արտեմ Բալասանյանը: Ն.Ալավերդյանի գեկուցումն ուշագրավ էր այն առումով, որ ամփոփ պատկերացում էր տալիս Գորիսի փառապանծ պատմության, այդ պատմության մի կարեւոր անկյունաքարձի՝ Գորիսի պետականլսարանի հիմնադրման կենսահանգամանքների, զարգացման ու կայացման ընթացքի մասին: Ուսանողներին մեծ ոգեւորություն պատճառեց Արտեմ Բալասանյանը՝ խոսելով ուսանողական բացառիկ մի նախաձեռնության՝ Գորիսում եռաչափ տպիչների արտադրության մասին:

Լիագույն մար միտից հետո գիտա-

կան գիտաժողովի արդյունքները: Բաժանմունքների ղեկավարներն ամփոփիչ տվյալներ ներկայացրին մասնախմբային միտերի թեմատիկ քննարկումների մասին եւ, ընդհանուր առմամբ, գիտաժողովը համարեցին կայացած:

Ռեկտոր Ա.Ղուկասյանը, ամփոփելով երկօրյա գիտական նստաշրջանը, ողջերթի խոսք հղեց ուսանողներին եւ նրանց հանձնեց հավաստագրեր:

Ուսանողների համար նախատեսված էր նաեւ պատմամշակութային այց ղեպի ԽՆՃՈՐԵՍԿ, ինչն ամբողջացրեց օրվա գունանկարը:

ՆՈՆՆԱ ՄԻՋՈՑԱՆ

Հայտարարություն

Մեղրի քաղաքի իրշեջ-փրկարարական ջոկատում ծառայության համար պահանջվում են մինչեւ 35 տարեկան զինվորական ծառայություն անցած եւ միջնակարգ կրթություն ունեցող վարորդներ ու փրկարար ծառայողներ: Դիմել Մեղրի քաղաքի իրշեջ փրկարարական ջոկատ կամ զանգահարել (093) 955 797 հեռախոսահամարով:

Սյունիքի մարզային փրկարարական վարչություն

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՅՈՒՆԻՍԵՍ ԱՇԽԱՐՀ»
ՍԿԴԱՆԱԾԱԿ ՊՐԱՍԱՆԱՏՎՈՒԹՅԱՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Գլխավոր խմբագիր՝
ՍՍՍՎԵՆ ԱՆԷՍՍՅԱՆ
Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր փճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԳ - ՇԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հրումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Ձեռնի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրմանը՝ 1530, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 08.11.2017թ.: